

ԱՊՈՒԹԻՒՆ «ՀԱՌԿԵՐ» ԱՐԱՎԻՐԻ

№ 12.

Ա. ԼՈՒԿԱՉԵԽԻԶ

ԾԱՂԻԿՆԵՐԻ ՄԵԶ

Ժամանակակից կոմի-
դիա մանուկների համար եր-
կու առաւտծով, երգերով ու
պարերով

ԹԱՐԳԱ. Կ ԹԱՌԱՆԵԱՆ

891.71Մ
L-90

ԹԻՖԼԻԶ

ԷԼԵՔՏՐԱՆԱՐԴ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՐԱՆԵԱՆԻ ՊՈԼԻՑ. 7

1910

135^ր ան.

EIDS YAM 80

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ «ՀԱՅԵՐ» ԱՐՄԱԴՐ 30 MAY 2017

Մ 891-715 № 12. ԿՑ.

L-90

ԱՅ

Կ. ԼՈՒԿԱ.ՇԵՎԻՔ

ԾԱՂԻԿՆԵՐԻ ՄԵԶ

1001
4859



Թ.Ա.ԲՈՅ. Կ. ԹԱ.Խ.ԱՐԵՎՈՒ



ԷԼԵԿՏՐԱՆԱԿԱՐԱՎՈՐ ՏՈՒՄԱՆ ՕՐ. Ն. ԱՐԱՆԵԱՆԻ ՊՈՒԽ. 7
1910

Ժամանակի ական կոմի-
տիս մանուկների համար. եր-
կու արարածով, երգեռվ ու
պարերով

միշտ ու չըստապահություն է պահպան պահպան
տար դժվանեա և տեսն ու մաքար զմեքիրա ուստ
բայթ այս ձգմատեա խոսքաբառուց վետեա շնուրու

շնուրու պահպանություն է պահպան պահպան
զմեք մի մատ առաջ առաջ առաջ առաջ առաջ պահպան
առաջ առաջ առաջ առաջ առաջ առաջ առաջ պահպան
առաջ առաջ առաջ առաջ առաջ առաջ առաջ պահպան

ԳՈՐԾԱՂ ԱՆՁԻՆՔ

Ծերունի այգեպանկ	նրա թոռը 7 տ.
Մարգարիտ	
Վարդ	
Սպիտակ շուշան	
Դեղին աստրա	
Կռւինչ	
Կարմիր կակաչ	
Զանգակիկ	
Մանուշակ	
Մկնականջ և այլ անխօս ծաղիկներ	
Թիթեռնիկ	
Լուսատիտիկ	
Ա. կանաչ մժեղ	
Բ. կանաչ մժեղ	
ծաղիկներ	

Գործողութիւնը կատարում է պարտէ զում

Պարտէզը կարելի է այսպէս պատրաստել. — բերել շատ ծաղիկներ, եղևնիներ, մամուռ, ածուներ պատրաստել, պատել ցանկապատով. ածուների վրա կանդնում են մանուկները — ծաղիկները:

Հագուստները կարելի է կարել կօլինկօրից, մարմաշից (կիսէյից), կամ ուրիշ կտորից, միայն թէ ներկայացւելիք ծաղկի գոյն ունինայ: Խոկ դերակատարի գլխարկը պիտի նմանւի այն ծաղկին, ինչ որ ներկայացնում է. Կոկոնը գէպի վեր պէտք է լինի: Գլխարկները կարելի է շինել ծխախոտի գումաւոր թղթից կամ կիսէյից. Մանուշակն ու Մկնականջը գլխարին կարող են ծածկել մանուշակի և մկնականջ ծաղիկներից պսակներ:

Թիթեսնիկը պէտք է թեր ունենայ. Ինքը շատ ժիր է ու անհանգինտ: (Թեհերը այսպէս են պատրաստում. երկաթէ մաւթուլից թեկի շրջանակն են շինում և նրա երկու կողմից թափանցիկ տիւլով պատում): Թիթեսնիկը ծածկում է սև գլխարկ, ունի երկար բեխիկներ:

Լուսատիտիկը հազած է սպիտակ, փայլուն հագուստ. (կարելի է գնիել բրիեանտի փոշի և վրան ցանել): Ամբողջ հագուստը պէտք է ծալք ծալք լինի, շատ նեղու սղմած: Ունի գլխաւոկ, փոքրիկ բեխիկներ:

Երկու Մժեղները հազած են կանաչ-կապտագոյն նեղ հագուստներ, այդպիսի էլ գլխարկներ՝ բեխիկները սև, թեհերը փոքր և կանաչ: Շարժումները երկշոտ են, խօսում են համեստ ու գգւանքով. հասակով պէտք է ծաղիկներից կարճ լինեն:

Մարգարիտը հազած է կարճ զգեստ. կապած է զոգնոց:

Այգեպանի հագին է կապոյտ շապիկ, սպիտակ գողնոց. քայլում է կուացած. մօւուքըն ու բեխերը ալեսոր:

Վերջին արարւածում, կենդանի պատկերի մէջ հնուում պէտք է վառել բենգալեան կարմրագոյն կրակ:

ԱՐՍՐԻԱԾ ԱՌԱՋԻՆ

(*) Անորդ մաս մի ըմբած մեմ
արդ ամառած մամածած մոլլափ
խխառած բանքած մարուց
գլխար ու մայս
բեմը ներկայացնում է պարտէզ, ձեմելիքները
ծածկւած են աւազով: Աջ, առաջարեմի մօտ — թուփ,
նրա ետքը նստարան: Ածուների վրա ծաղիկներն են
ծաղկում: Մէջտեղ, ամենաբարձր ածուի վրա, երեսում
է վարդը:

ՏԵՍԻԼ I

Այգեպան. — (մանում է ժպիտով, ծեռքին
ըռնած ունի ցնցուղ, կեղեսաթել ու ծողեղ. ղիտում
է ծաղիկներին) Սիրուն ծաղիկներս, բոլորն էլ
բացւել էք, ի՞նչ զեղեցիկ էք... իմ սիրելիներ...
իմ նազելիներ: Սիրաս հիացնում էք... Հիմա ձեզ
ջրեմ, չորացած ճիւղերդ կտրեմ, թոյլերիդ ծողե-
րին կապեմ:

Ծաղիկներ. — (խմբովին, մեղմ) Շնորհակալ
ենք, մեր բարի այգեպան:

Այգեպան. — (ըրելով եւ ոտղելով ծաղիկնե-
րը): Հէնց որ մի թեթև քամի է փշում, ծաղիկ-
ներս խօսում էք միմեանց հետ: Հասկանում եմ
ձեզ, իմ սիրելիներ: Լաւ եմ հասկանում... Ամ-
բողջ կեանքս ձեզ մօտ եմ ապրել (ծաղիկները
զլուխները խոնարհում են): Տեսէք, տեսէք, ինձ
ողջանում են, իմ սիրելիներ, իմ զեղեցիկներ:

ԲԵՄԻ ԵՏԿԻց մի ձայն (երգում է *)

Փայլուն ճաճանչի գարունը եկաւ
շողողուն թագով, ծաղկանց նաւակով
ուրախ ու զւարթ նաւը լծւած էր
իրեն ժպիտով, թիթեռնիկներով.

Այգեպան.—(ականջ է ղնում, խօսում է զգուանքով): Իմ Մարգարիտն է երգում... ես շատ եմ սիրում ծաղիկներս, բայց իմ սրտիս համար Մարգարիտից էլ սիրելի ծաղիկ չը կայ: Իմ ամենանուշ ծաղիկն է նաև իմ չքնաղ թիթեռնիկն է: Իմ երգիչ թռչնակն է:

ԲԵՄԻ ԵՏԿԻց.—(երգում է):

Գարունը եկաւ,
ծաղկանց նաւակով.
նաւը լծւած էր
թիթեռնիկներով.

Այգեպան.—(ծաղիկներ ջրելով, մեղմ կըսկընում է):

Գարունը եկաւ
ծաղկանց նաւակով
նաւը լծւած էր
թիթեռնիկներով.

Մարգարիտ.—(արագ ներս է վագրում; ձեռքին դաշտի ծաղիկների ու համեմատի մի փնջիկ, զըլիին նոյնալիսի մի պսակ):

*) Երեխաները կարող են երգել իրենց ծանօթ հզանակներով երգեր:

ՏԵՍԻԼ Ա

Այգեպան և Մարգարիտ

Մարգարիտ.—Պապի, պապի, դժւ էլ իմ սիրած երգն ես երգում (զգանքով): Իսկ ես դաշտումն էի վաղվում: Այնաեղ այնքան լաւ է: Ցորենը արդէն բարձրացել է: Ինձանից էլ բարձր է: Մէջը որ թագնւեմ—ոչոք չի գտնի... ի՞նչքան ծաղիկներ կան այնտեղ: Տես, ինչ պսակ եմ հիւսել ինձ համար:

Այգեպան.—(զիկում եւ համբուրում է նրան): Դու էլ մեր դաշտի ծաղիկն ես... չա, հա հա... Դու էլ մեր կարմիր, փոքրիկ ծաղիկն ես: Հա, հա, հա:

Մարգարիտ.—Պապի, դժան համար էք ինձ Մարգարիտ անւանել:

Այգեպան.—Դու էլ Մարգարիտ ծաղիկն ես նման: Նրա պէս համեստ, փոքրիկ...

Մարգարիտ.—Ախ, սիրելի պապի, քո այդում ինչքան գեղեցիկ ծաղիկներ կան: Ճշմարիտ չը գիտեմ, որն է բոլորից գեղեցիկը:

Այգեպան.—(ուղղելով վարդը): Իհարկէ, ամենից լաւը վարդն է: Նայիր, սա ինչքան գեղեցիկ է, հպարտ: Բոլոր ծաղիկների թագուհին է (վարդը շարժում է զլուկիը):

Մարգարիտ. — Իսկ ես ամենից շատ մա-
նուշակն եմ սիրում:

Թէպէտ թուփը գեղեցիկ չէ,
և գոյնով էլ չքնաղ չէ,
բայց դեռ հեռւից հրաւիրում է
իրա անուշ բուրմունքով...

(Մանուշակը զլովոր շարժում է):

Այգեպահ. — Ահա, ես վերջացրի: Աճեցէք,
ծաղկեցէք, ուրախացէք, իմ սիրելի զաւակներս
(ծաղկները շարժում են զլովսները): Դէհ, Մար-
գարիտ ջան, գնանք տուն: Պառաւ տատը սպա-
սելիս կը լինի իր բալիկին... Ամբողջ առաւօտ
քո ճամփան էր պահում:

Մարգարիտ. — Մնաք բարե ծաղկներ: Ա-
ռանց մեղ չը տխրէք (ծաղկները ողջունում են):
Վաղը, պապիկի հետ դարձեալ կը գամ այստեղ
(զնալով երգում է, իսկ այգեպահը ճայնակցում):

Գարունը եկաւ

ծաղկանց նաւակով,

նաւը լծւած էր

թիթեռնիկներով:

(Հո ժամանակ ըեմի վրա լուսթին է տիրում)

Տեսիլ III

Ծաղկների խումբը. — (Երգում է շատ
մեղ):

Ա՞յս, երեկոյ, թոփը մեղ մօտ.

դաշտից արդէն փախաւ լոյս,

քեզ ենք դիմում մեր այս երգով,

երեկոյեան վերջալոյս:

Ամենուրէք սուսիկ փուսիկ...

օդը նոյնպէս մեղմ նիրհեց,

իսկ ձորակում քաղցր, անուշիկ

սոխակն արդէն դայլայլեց:

Հովիտն արդէն երազում է,

գիշեր ժամն է մօտենում,

և թիւտենու անշարժ ծայրին

վերջին շողերն են մարում:

(Կրկնել առաջին 4 տողը):

Տեսիլ IV

Երկու Մժեղներ. — (Երկշոտ նայելով շուրջը,
կամաց մտնում են):

Ա. *Մժեղ.* — Եղբայր, դու լսեցի՞ր, քամին
ինչ էր երգում:

Բ. *Մժեղ.* — Լաւ երգ էր:

Ծաղկների խումբը. — (շարունակում է
բարձր): Դէհ, երեկոյ, թոփը մեղ մօտ, և այն:

Ա. *Մժեղ.* — (զարմացած) Եղբայր, այս հօ-
ժաղկներն են երգում:

Բ. *Մժեղ.* — (կամաց) Շուտով բարեկր նը-
րանց, շնորհակալութիւն յայտնիր... Նրանք մեղ

համար են երգում...ի՞նչքան բարեսիրտ են:
Երկու Մժեղներ.—(միասին ողջունելով)
Շատ լաւ է, պատւելի ծաղիկներ: Շատ շնորհա-
կալ ենք ձեզնից: Հրաշալի երգ է: Կրկնեցէք,
կրկնեցէք:

Վարդ.—(մոգական զաւազանը շարժելով)
Ծաղիկներ, իշեք ձեր տեղերից (ծաղիկները շարժ-
ում են):

Կակաչ.—(մօտ վազելով Մժեղներին, զայ-
րացած) Կորէք այստեղից, կանաչ միջատներ...
Թագուհին իսկոյն այստեղ է գալու:

Ա. Մժեղ.—Պարոն կակաչ, իզուր մի բար-
կանայ ու այդպէս մի գոռայ: Մենք քեզ չենք
խանդարի:

Բ. Մժեղ.—Մենք հիանում էինք ծաղիկնե-
րով և երգին էինք ականջ դնում...Շատ լաւ էք
երգում:

Կակաչ.—Լոեցէք: Զը համարձակէք իս-
սել: Կորէք այստեղից:

Մժեղներ.—(վիրատորած) Կը գնանք, կը
գնանք: Մի գոռայ: Զայնդ կը փչացնես...ի՞նչ
բարկացկոտն է (հեռանում են թվի տակ եւ նըս-
տարանի վրա նսում միմեանց մօտ: Երաժշտու-
թիւնը մարշ է նսագում: Ծաղիկները իջնում են
իրենց տեղերից եւ պատկառանքով խմբով են
վարդի շուրջը):

Վարդ.—Միրելի ծաղիկներ: Ես ուզում եմ

ձեզ ուրախացնեմ: Հրաւերել եմ թիթեռնիկին,
Լուսատիտիկին...Այսօր մի գեղեցիկ պարահան-
դէս պիտի սարքեմ...Պարեցէք, գւարճացէք, ու-
րախացէք...

Ծաղիկներ.- Շնորհակալ ենք, թագուհի:
Ի՞նչքան բարի ես: Շնորհակալ ենք: Ա՛ն, ի՞նչ
ուրախ ենք, ուրախ:

Վարդ.—Շուշան, քո կոկոններից հիւրասի-
րիր բոլորին մեղքախառն ցօղով:

Շուշան.—(ոեւերանս անելով) Աչքիս վրա,
թագուհի:

Վարդ.—Մանուշակ, թանկագին հիւրերին
ծաղկի փռշիռվ ծածկիր:

Մանուշակ.—(ոեւերանս անելով) Հրամանք
ես, թագուհի:

Ծաղիկներ.—Շնորհակալ ենք քեզնից, թա-
գուհի: Դու բարի ու ողորմած ես:

Վարդ.—(շարժելով մոգական զաւազանը)
Թող երաժշտութիւնը նւագի: Մենք կը պարենք:

Ծաղիկներ.—Ով թագուհի Վարդ, մենք ա-
մենքս պարձենում ենք քեզնով: Ամբողջ հոգով
սիրում ենք քեզ: Քո հաւատարիմ ու մտերիմ
բարեկամներն ենք:

Վարդ.—Շնորհակալ եմ ձեզնից, սիրելի
ծաղիկներ: Ինձ մխիթարում է ձեր սէրը և ձեզ
համար պատրաստ եմ անել, ինչոր կարող եմ:

Աստրա.—Մարդիկ իսկապէս ծիծաղելի են:

Նրանք կարծում են, թէ ածուների վրա մենք
անշարժ ենք աճում:

Կուինչ.—Եւ մինչև անգամ մեր այգե-
պանը չը գիտի, որ մեր Վարդ-թաղուհին մողա-
կան գաւագան ունի:

Զանգակիկ.—Եւ հէնց որ թագուհին գա-
ւագանը շարժում է, մենք իջնում ենք ածունե-
րից, և աստղերի փայլով ու լուսնի լոյսով խըմ-
բովին երգում ու պարում ենք:

Վարդ.—(շարժում է զաւազանը):

Մկնականջ.—Դէս նւագեցէք: Թագուհին է
պատիրում (եղածշուլթինը նւազում է: Ժաղիկ-
ները, պարում են ֆանտաստիկական պարեր ^{*)}):
Երկու Մժեղները նստարանի վրա նստած եւ նա-
յելով ծաղիկներին, իրենք էլ նստած տեղը պա-
րում են):

Ա. **Մժեղ.**—Եղբայր, ի՞նչ ուրախ է այստեղ:
Բ. **Մժեղ.**—Այո, շատ ուրախ է:

Ա. **Մժեղ.**—Եղբայր, չեմ կարողանում հան-
գիստ տեղս նստել: Շատ եմ ցանկանում պարել:
Բ. **Մժեղ.**—Գնա, հրաւիրիր ծաղիկներից
մէկն ու մէկին: Նրանք դոհ կը լինեն: Զէ որ մժեղ-
ներիս մէջ դու առաջին պարողն ես:

Ա. **Մժեղ.**—Իսկ եթէ կակաչը նորից բար-
կանայ:

Բ. **Մժեղ.**—Այ քեզ բան: Դու նրա հետ մի

*) Կարող են պարել ծանօթ կլոր պարեր:

Խօսի. (Ժաղիկները յոզնելով սկսում են զրունել
ու խօսել միմեանց հետ: Երաժշտութինը մեղմ
նազում է):

Ա. **Մժեղ.**—(թռչկոտելով, մօտենում է Մա-
նուշակին) Թոյլ տուր քեզ հետ պարեմ:

Մանուշակ.—Կանաչ Մժեղ, ես շատ եմ յոդ-
նել, չեմ կարող պարել:

Ա. **Մժեղ.**—(մօտենալով Աստրային) Յար-
գելի Աստրա, չես բարեհաճիլ արդեօք ինձ հետ
պարել: Ես շատ լաւ եմ պարում:

Աստրա.—(անցնելով) Ես չեմ ցանկանում
քեզ հետ պարել:

Բ. **Մժեղ.**—(Ծուշանին) Յարգելի Ծուշան,
եղբայրս առաջնակարգ պարող է: Նա կամե-
նում է քեզ հետ պարել:

Շուշան.—(կանգնում է հպարտ) Դու գի-
տես թէ ում հետ ես խօսում:

Բ. **Մժեղ.**—Քեզ հետ:

Շուշան.—Իսկ ով եմ ես: Ո՞վ: Դէս, պա-

տասխանիր:

Բ. **Մժեղ.**—Դու, ծաղիկ ես, սպիտակ Շու-
շան:

Շուշան.—(հպարտ) Ես թագուհու օգնա-
կանն եմ և նրա առաջին ընկերուհին:

Բ. **Մժեղ.**—Միթէ: Շատ ուրախ եմ: Եղ-

բայրս շատ ուրախ կը լինի...

Շուշան.—Կորիք, անքաղաքավարի: Ի՞նչ-պէս համարձակւեցիր ինձ մօտենալ:

Ա. Մժեղ.—Տիրուհի Վարդ, խնդրեմ ինձ հետ պարես—դու գոհ կը մնաս ինձնից: Ես շատ լաւ եմ պարում:

Ծաղիկներ.—(սարսափած կանգնեն առնով): Ախ, յանդուզն: Ախ, անպիտան: Կորիք, կորիք, (շրջապատում են Մժեղին եւ ոգում են քաջ տալ նրան):

Բ. Մժեղ.—(միջամտելով) Թողէք եղբօրո... Թողէք:

Ծաղիկներ.—Սրանց հարկաւոր է լսելքի բերել... Կորիք, կորիք:

Վարդ.—Ծաղիկներ, հանդիսաթողէք սրանց (ծաղիկները ետ են քաշում): Փոքրիկ Մժեղ, ուշեմն դու կամենում ես ի՞նձ հետ պարել:

Ա. Մժեղ.—(երկշոտ) Այո, տիրուհի Վարդ: Մենք, եղբօրս հետ նայում էինք ահա այն թփի տակից՝ ձեր ուրախութեան վրա, և մեզ շատ դուր եկաւ ձեր պարելը: Եւ եղբայրս ասաւ, որ շատ ուրախ կը լինէք, եթէ ձեղ հետ պարեմ...

Վարդ.—Հա, հա, հա: Ի՞նչպիսի պատիւ...

Ծաղիկներ.—Հա, հա, հա: Ի՞նչպիսի պատիւ...

Զանգակիկ.—(ծաղրելով): Գուք ինչ լմւ էք հագնւել պարահանդէսի համար:

Կուինչ.—Զէք ամաչում, այդպիսի հա-

գուստներով մի՛թէ կարելի է հիւր գտւ... Կակաչ.—(սարսափած): Եւ մինչև անդամ բոբիկ էք...

Ա. Մժեղ.—(նայելով իրեն եւ եղբօրվա): Ի՞նչ է որ, մեր հագուստները շատ մաքուր են... Մենք մեզ պահում ենք հանդարտ ու քաղաքա-վարի և ոչինչ վատ բան չենք անում...

Բ. Մժեղ.—Մենք չենք կարող շքեղ հագուստել: Մենք չքաւոր ենք: Լաւ չէ չքաւորութիւնը ծաղրել:

Վարդ.—Բաւական է, Գնացէք, և մի խան-

դարէք մեզ:

Ծաղիկներ.—(առաջ զալով): Դէհ, գնացէք,

գնացէք... Կակաչ.—Կը գնաք թէ ոչ: Դուրս կորէք

մեր այգուց:

Ա. Մժեղ.—Պարոն Կակաչ, մի գոռայ: Կը

գնանք... Խնդրեմ մեզ չը դիպէք:

Բ. Մժեղ.—Միը գիպչի... Գնանք, եղբայր...

Սրանք ամենքն էլ չար են, պարձենկոտ ու հը-պարտ... (զնում են: Ժաղիկները զրօնում են զոյգ-զոյգ)

Աստրա.—(ուրախ): Մեղ մօտ հիւրեր են գալիս, հիւրեր. ահա այստեղ, հեռւում են: Ես տեսնում եմ նրանց:

Ծաղիկներ.—Ուր են: Ուր են:

Շուշան.—Տեսէք, արդէն մօտենում են...

Մկնականջ. — Նրանք ի՞նչ լաւ զարդարւել են: Ի՞նչ գեղեցիկ հագուստներ, ի՞նչ բեխիկներ, ի՞նչ տոտիկներ:

Մանուշակ. — Ի՞նչ գեղեցիկ են, լաւ և ուրախ:

Կուլինչ. — Գնանք նրանց ընդառաջ:

Ծաղիկներ. — Ողջոյն ձեզ, թանկագին հիւրեր:

ՏԵՍԻԼ V

Թիթեռնիկ և լուսատիտիկ (շրջապատմած ծաղիկներով)

Լուսատիտիկ. — Վարդ-թագուհի, ի՞նչքան երջանիկ եմ քեզ տեսմելուն: Շնորհակալ ենք սիրալիր հրաւէրիդ համար:

Թիթեռնիկ. — (ողջունելով): Ողջոյն քեզ, չընալ թագուհի: Մենք այնպէս շատապում էինք ձեզ մօտ գալու: (Դիտում է շուրջը) Այսաեղ ի՞նչ լաւ է:

Վարդ. — Մեր ցանկալի հիւրերն էք և պահանջկոտ չը լինէք մեր համեստ տօնից:

Լուսատիտիկ. — Ձեզ մօտ, չքնար թագուհի, միշտ այնպէս լաւ է:

Թիթեռնիկ. — Թագուհի, ես այնպէս սիրում եմ պարել: Դա ինձ համար ամենամեծ ուրախութիւնն է:

Վարդ. — (ժպտալով): Թիթեռնիկ, ոիշ-

րելի, ափսոս որ ուշացաք: Մեզ մօտ հրաշալի պարողներ էին եկել:

Թիթեռնիկ. — Ո՞վքեր էին: Խնդրում եմ թագուհի, ասա ովքեր էին:

Վարդ. — Հա, հա, հա: Թող ծաղիկները պատմեն:

Ծաղիկներ. — Հա, հա, հա:

Լուսատիտիկ. — Դէհ, ասացէք՝ ովքեր էին:

Թիթեռնիկ, կառիճներ թէ ծաղիկներ:

Աստրա. — Անպէտք կանաչ Մժեղներ...

Զանգակիկ. — Անկոչ հիւրեր: (Լուսատիտիկն ու Թիթեռնիկը զարմացած ձեռքերը իրար են զարկում):

Կակաչ. — Ոչ, դուք մէկ լսեցէք... հա, հա, հա... Մենք պարում էինք, իսկ նրանք մըտան այստեղ...

Մանուշակ. — Նախ և առաջ, նրանցից մէկը ինձ հրաւիրեց պարելու:

Աստրա. — Յետոյ ինձ:

Շուշան. — Իհարկէ, ինձ նոյնպէս:

Վարդ. — Եւ վերջապէս ես արժանացայ այդ պատին:

Լուսատիտիկ. — Ի՞նչ յանդգնութիւն:

Թիթեռնիկ. — Ի՞նչ համար ծակութիւն:

Շուշան. — Այնպիսի տգեղ, անպիտան հագնւած միջատներ էին և յանկարծ առում են թա-



գուհուն, «արի քեզ հետ պարենք — մենք լաւ ենք
պարում»:

Լուսատիտիկ. — Դուք նրանց չը վանդեցիք:
Թիթեռնիկ. — Ա՛խ յանդուղներ, Հարկա-
ւոր էք նրանց պատժել:

Վարդ. — Ես ներեցի նրանց և պատւիրեցի
հեռանան:

Բոլորը. — Ի՞նչ բարի ես, թագուհի, ի՞նչ
ողորմած:

Վարդ. Բաւական է, ինչքան խօսեցինք
յիմար Մժեղների մասին. Շուշան, Մանուշակ,
մեծարեցէք հիւրերին:

Շուշան և Մանուշակ. — (Շուշանն ու Մա-
նուշակը ծաղիկներ են առաջարկում նրանց):

Լուսատիտիկ. — (Խմելով հիմքը) Ի՞նչ լաւ է
մեղրախառն ցողը,

Թիթեռնիկ. — Ախ, ի՞նչ թարմ և հիւթալի է:

Ծաղիկներ. — (Առյնպէս դիմում են):

Մանուշակ. — Թանգագին հիւրեր, խնդրեմ
էլի վեցընէք:

Լուսատիտիկ. — Ոչ, ոչ: Շնորհակալ եմ:

Թիթեռնիկ. — Ես այլ ևս չեմ կարող:

Վարդ. — (շարժում է մոգական զաւազանը):
Այժմ սկսենք պարերը, Թող երաժշտութիւնը
նւագի: (Բոլորն էլ սլարում են):

ԿԱՐԱԳՈՅՐ

ԱՐԱՐԻԱԾ ԵՐԿՐՈՐԴ

Միենոյն այգին: Ծաղիկները առաջւա նման ածունե-
րի վրա են: Վարդը արտում, գլուխը խոնարհած է:

ՏԵՍԻԼ I

Մարգարիտ. — (մենակ, բարշում է ձեռքի
քարշակն եւ երգում է):

Ես այգու միջով
քարշակ եմ քարշում,
դեղին աւազով
ճամփան եմ ցանում,
և երբ վերջացնեմ
ծաղիկ ծողովեմ,
սիրուն, գոյնզգոյն
պատկաներ հիւսեմ,—
պատկաներն առնեմ
եղբօրս տանեմ.
գեռ նա անուշիկ
քնած է կարծեմ:

(Դաւկարում է երգել, կանգ է առնում եւ ձեռ-
քը ծակատին դնելով նայում է հեռուն): Ահա և
պապիկը գալիս է իր ծաղիկների մօտ: Սիրե-
լի ծաղիկներ, պապս ձեզ շատ է աիրում:

ՏԵՍԻԼ. II

Այգեպան. — (ցնցուղ, թելերու ծողեր քոնած) Ա, դու... արդէն այստեղ ես, սիրունիկ: Խաղա, վազվզիր... ուրախ անցկացրաւ օրերդ... Քեզ սիրում են քո այդ բարի և ուրախ սրախիդ համար... Քեզ սիրում են, գգւում են...

Մարգարիտ. — Պապի ջան, ես էլ ամենքին եմ սիրում. — Եւ մայրիկին, և քոյրիկին, և քեզ, և տատիկին, բոլոր մարդկանց, մեր պարտէզը, դաշտը, արել, թռչնակներին ու ծաղիկները.. բոլորին, բոլորին...

Այգեպանը. — (փաղաքշելով Մարգարիտին) Սիրելի բալիկս: Սիրել ամենքին... Եւ լաւ կապրես աշխարհում... Այդպէս է թռոնիկս:

Մարգարիտ. — Պապիկ ջան, գիտե՞ս՝ քեզանից ի՞նչ պիտի խնդրեմ:

Այգեպան. — Երևի մըգի համար երեք կոպէկ:

Մարգարիտ. — Ոչ, պապի ջան: Թոյլ կը տաս, քիչ ծաղիկներ պոկեմ և երբօրս համար պսակ հիւսեմ:

Այգեպան. — Գիտես, Մարգարիտ ջան, ափսոս է պոկելը:

Մարգարիտ. — Սիրելի պապիկ, միւս ծաղիկներն էլ շուտով կը ծաղկեն: Թոյլ տուր, սիրելի պապի:

Այգեպան. — Ի՞նչ անեմ քեզ... Դէհ, գնապոկիր, պսակ հիւսիւր...

Մարգարիտ. — (տիսուր) Ալս, պապի, տես, ինչ ցաւալի բան է: Վարդը թառամում է:

Այգեպան. — Այն, թառամում է: (Տիսուր) Ի՞նչ է պատահել եմ թագուհուն: Ի՞նչու է այսպէս վաղ թառամում: Եւ թերթիկները մինչև անգամ խոնարհացըել է: Քիչ ջրեմ, կապեմ — գուցէ առողջանայ: (Զբաղտում է ծաղկով):

Մարգարիտ. — (ծաղիկներ է պոկում, այսինքն՝ բռնում է նրանց ծեռփից, պսակ-շրջան է կազմում: Երաժշտութիւնը նւազում է մարշ) Ի՞նչ հրաշալի ծաղիկներ են: Ի՞նչ հիանալի: Մանցից պսակ կը հիւսեմ և կը գնամ եղբօրս կը տամ:

Այգեպան. — Դէհ, Մարգարիտ ջան, ժամանակ է, գնանք տնեն:

Մարգարիտ. — (Երգում է):
Գեղեցիկ, կարմիր,
ծաղիկներ քաղեմ,
եղբօրս համար
պսակ կը հիւսեմ...
(Կազմակերպ գնում է, Մարգարիտը ծաղիկները ծեռփին բռնած վազում է):

ՏԵՍԻԼ III

Վարդ.—(մենակ, զլովսը ամելի ու ամելի է կախում եւ նստում է զետնին): Ես թառամում եմ... Բոլորովին ուժասպառ եմ եղել... Ուր է իմ մոգական գաւազանը: Երէկ, պարելիս գաւազանս կորցրի... Այժմ էլ ոչինչ չեմ կարող անել իմ սիրելի ծաղիկների համար... Ի՞նչքան տիսուր և ծանր է մենակ մնալը: (Դլովսը բարձրացնելով) Ի՞նչ հրաշալի է... Թուչնակները ի՞նչ հիանալի են երգում... Իսկ ես հիւանդ եմ... Խմել եմ ուզում... գոնէ տեղիցս վեր կենամ... Ուր են իմ բարեկամները... Երանի որկ է մէկը գար... Օ՛, ինձ սիրող շատ բարեկամներ ունեմ՝ ծաղիկներ, թիթեռնիկներ, լուսատիտիկներ: Գոնէ գան, օգնեն ինձ, որոնեն իմ մոգական գաւազանս, և այն ժամանակ ես կառողջանամ: Նորից կուրախանամ, կուժեղանամ, զարձեալ ծաղիկների համար պարահանդէս կը սարքեմ: Ի՞նչ դժւար է հիւանդ լինել. մենակ, անօգնական... Ծարաւից խեղդուում եմ... խմել եմ ուզում:

(Եղածշտութիւնը մեղմ մարշ է նապում):

ՏԵՍԻԼ IV

Վարդ, Լուսատիտիկ և Մկնականջ
Լուսատիտիկ.—Այսօր այստեղ ի՞նչքան

ախուր է:

Մկնականջ.—Ծաղիկները բոլորն էլ պրկւած են:

Լուսատիտիկ.—Նայիր, վարդը ի՞նչպէս թառամել է:

Մկնականջ.—Նա ի՞նչքան թշւառ է... խեղճ...

Վարդ.—(զլովսը բարձրացնելով): Ախ, այդ դժւք էք, իմ բարեկամներս: Ես հիւանդ եմ... խնդրեմ ինձ խմելու բան տւէք... Մնացէք ինձ մօտ. փնտրեցէք իմ մոգական գաւազանը...

Մկնականջ.—Ես կը մօտենամ:

Լուսատիտիկ.—(Ճնելով նրան, կամաց) Զը համարձակւես: (Բարձր) Ներիր, սիրելի Վարդ, այգու ետեռում, մարգագետնի վրա մենք ժողով ունենք... Ժամանակ չունենք (արագ զնումէ, եւ հետը քարշումէ Մկնականջին, վերջինս լիմալորում է):

IV ԱՍՏԵՐ

ՏԵՍԻԼ V

Վարդ, Կակաչ և Աստրա

Կակաչ.—Լսել ես դու, մեր թագուհին թառամում է: Այժմ նա մեզ համար էլ ոչինչ չի կարող անել:

Աստրա.—Այս, այս, նա այնպէս կամակոր է գարձել, տգեղացել:

Վարդ. — (զլուխը բարձրացնելով) Ծաղիկներ,
խնդրում եմ, մօտ եկէք:

Կակաչ. — Մեզ սպասում են թիթեռնիկ-
ներն ու ծաղիկները:

Աստրա. — (մի կողմ) Շատ էլ հաճելի չէ հի-
ւանդի հետ նստելը: Գնանք Կակաչ, լաւ չէ սպա-
սեցնել տալ... (գնում են):

ՏԵՍԻԼ VI

Վարդ, Շուշան և Զանգակիկ

Վարդ. — Ի՞նչպէս սպասում էի քեզ, իմ սի-
րելի օգնական: Շնուտ, շնուտ եկ ինձ մօտ... բան
տուր խմելու... (Զանգակիկը՝ եւ Շուշանը կարծնու
չեն լուս եւ կամացուկ իրար հետ խօսելով մօ-
տից անցնում են):

ՏԵՍԻԼ VII

Վարդ, Մանուշակ, Կուինչ և Թիթեռնիկ
Թիթեռնիկ. — Այսօր ինչքան եմ զւարձա-
ցել:

Կուինչ. — Սիրելի Թիթեռնիկ, ամենալաւ
բանը զւարձանալն է:

Վարդ. — (կամաց) Այս կողմն եկէք... ես ինձ
վատ եմ զգում... քիչ ջուր ցանեցէք ինձ վրա...:

Թիթեռնիկ. — Սիրելի Վարդ... մենք չենք
կարող... կը կեղսոտենք մեր շքեզ շորեր:

Մանուշակ. — Ես կը գնամ նրան օգնելու...
ի՞նչ խեղճ է նա... խեղճ...

Կուինչ. — (ըսնում է Մանուշակին եւ ուժով
տանում) Գնանք, Մանուշակ... դու ինքդ հիւանդ
ես... դու չը պէտք է յուզւես... գնանք...

Մանուշակ. — (Վարդին) Ես իսկոյն կը վե-
րադառնամ քեզ մօտ (գնում են):

ՏԵՍԻԼ VIII

Վարդը (մենակ)

Վարդ. — Ամենքը ինձ թողին գնացին: Հի-
ւանդ, ուժասպառ, էլ ոչոքի հարկաւոր չեմ...
Զար բարեկամներ: Ի՞նչ վատ բան արի, այս հւմը
ընտրեցի ինձ բարեկամ... (լալիս է):

ՏԵՍԻԼ IX

Վարդ, երկու կանաչ Մժեղներ (մտնում են):

Ա. Մժեղ. — Եղբայր, այդին այսօր ի՞նչ հան-
դարտ է:

Բ. Մժեղ. — Շատ ուրախ եմ, որ այն չար
ծաղիկները այստեղ չեն, եթէ ոչ դարձեալ կը
վոնդեն մեզ:

Ա. ՄԺԵՂ. — Այստեղ կարող ենք ազատ խաղալ... (թռչկոտում է):

Բ. ՄԺԵՂ. — Շատ լաւ...խաղանք... (թռչկոտում է. յանկարծ կանգնում, շուրջն է նայում եւ ուշադրովթիւնը լարում): Եղբայր, լոիր...կամաց...լսաւմ ես, այստեղ կարծես մէկը լալիս է:

Ա. ՄԺԵՂ. — (երկչուտ) Տես...այդ հօ Վարդն է լալիս...արցունքները, թարմ ցողի նման գլորւում են նրանից:

ՄԺԵՂՆԵՐ. — (արագ մօտ նն զնում) Ի՞նչ է պատահել, Վարդ թագուհի: Ինչու ճամար ես լալիս: (Գրկելով ու համբուրելով) Խնդրում ենք մի լար: Ասա՝ ի՞նչ միշտ ունեա:

Վարդ. — (կամաց) Ես թառամում եմ...Ամենքը հեռացան ինձանից...ես խմել եմ ուզում. . Ես կորցրի մողական զաւագանս...

Ա. ՄԺԵՂ. — Մի լար, սիրելիս: Մենք չենք հեռանալ քեզանից...ես խսկոյն խմելու բան կը բերեմ (Վազում է):

Բ. ՄԺԵՂ. — Մի լար.., Մենք կերպենք, քեզ կուրախացնենք:

Վարդ. — Ես յանցաւոր եմ ձեր առաջ...Արժանի չեմ ձեր փաղաքշանքին ու հոգացողութեանը...

Բ. ՄԺԵՂ. — (աղաղակելով) Վարդին! Օ՛, ի՞նչ ես ասում... Մենք բոլորը մոռացել ենք... Մենք ուրախութեամբ կօգնենք քեզ...

Ա. ՄԺԵՂ. — (քերում է դոյլ եւ ցնցուդ) Շուտով խմիր... (զգմլով խմացնում է, ջոր է սրբսկում Վարդին):

Վարդ. — Շնորհակալ եմ... Այժմ որոնեցէք իմ գաւազանը:

ՄԺԵՂ. — (վազում եւ վերադառնում են միմի փայտ ձեռքներին):

Վարդ. (զայրացած) Դա չէ... դա չէ...

ՄԺԵՂ. — Իսկոյն... իսկոյն... Մի բարկանայ... (ղոփս են փախչում, եւ մէկը ձեռքի քարշակը լցրած, իսկ միաը զիրկը լիցախ են սերում): Օ՛, ինչպէս յոգնեցինք: Ամբողջ այդին շրջեցինք: Տես:

Վարդ. — (քիչ բարձրանում է տեղից եւ նայում է: ՄԺԵՂՆԵՐԸ ջոկում են ցախը) Ահա, ահա նա: Իմ գաւազանը քարշակի տակ... Շնորհակալ եմ...

Բ. ՄԺԵՂ. — Համեցէք... ի՞նչ ուրախ եմ, որ դու միսիթարւեցիր:

Վարդ. — Այժմ ես ինձ լաւ եմ զգում: Առողջացայ, նորից ուժով եմ: Զեր արած լաւութիւնը ես երբէք չեմ մոռանայ...

ՄԺԵՂՆԵՐ. — (ուրախ ծիծաղում են եւ իրար ընդմիջելով) Ի՞նչ ուրախ ենք: Թոյլ տուր, ես ուղղեմ քո թերթիկները... Էլի մի քիչ էլ խմիր... Ի՞նչ լաւ է որ մենք ժամանակին եկանք:

Վարդ. — Շնորհակալ եմ ձեզնից, սիրելի ՄԺԵՂՆԵՐԸ... Տեսնում եմ որ ամենքն անսիրտ չեն... Բարեկամներին կարելի է ճանաչել միայն դըժբախտութեան ժամանակ... Ներեցէք, սիրելիք, որ ես ձեզ չը ճանաչելով՝ վիրաւորեցի ու կւնդեցի:

ՄԺԵՂ. — Ի՞նչ ես ասում... ի՞նչ ես ասում: (Վախնեցած) Ծաղիկները այս կողմն են վազում... Թափնւենք շուտով (թագնւում են):

ՏԵՍԻԼ X

Վարդը և ծաղիկները (Ներս են վազում)

Ծաղիկներ.—Ողջոյն քեզ, թագուհի: Ի՞նչ երջանկութիւն, որ առողջացել էք: Այսպէս շտապում ենք քեզ մօտ գալ... Թողեցինք մեր դործերը: Որքան ուրախ ենք, որ քեզ լաւ ենք տեսնում... Արդեօք դու ոչինչ չես կամ մենում:

Վարդ.—(Հպարա) Շնորհակալ եմ, հրաշալի ծաղիկներ: Ես գիտեմ թէ ինչպէս էք ինձ սիրում ու որչափ ինձ հաւատարիմ էք... Ճանաչում եմ ձեր բարի սիրտը:

ՏԵՍԻԼ XI

Վարդ, ծաղիկներ, թիթեռնիկ, լուսատիտիկ,
Մժեղներ:

Թիթեռնիկ.—Զքնաղ թագուհի, արդեօք ջուր չը ցանեմ քեզ վրա:

Լուսատիտիկ.—Թագուհի, արդեօք չես ցանկանալ քեզ վրա ծաղկեփոշի ցանեմ:

Վարդ.—(ծիծաղում է) հա, հա, հա... Ի՞նչ բարի էք... հա, հա, հա:

Ծաղիկներ.—(զարմացած նրա վրա են նայում):

Վարդ—Այս թփի տակ են կանաչ Մժեղները, Բերէք նրանց ինձ մօտ:

Ծաղիկներ.—(վազում, բռնում են Մժեղներին, նրանք վախեցած դիմաղրում ու աղաղա-

կում են՝ «Ժողէք, թողէք»...) Ահա նրանք, թագուհի, ախ, անպիտաններ, դուք էլի այստեղ էք:

Ա. Մժեղն. — (լացելով) Թագուհի... Մժեղն ոչինչ վատ բան չենք արել...

Բ. Մժեղն.— (լացելով) Ձեր ծաղիկները մեզ բռնեցին... Քարշ տւեցին... Ասացէք որ մեզ թողնեն:

Վարդ.— Ներեցէք, սիրելի մժեղներ, որ իմ ծաղիկները ձեզ վախեցրին: Լսեցէք, ես ուզում եմ ձեզ շուշանի մասին մի հեքիաթ պատմել: (Շուշանին)

Շուշան.— Ի՞մ մասին: Ի՞նչ պատիւ...

Ծաղիկներ.— Ի՞նչ բարի ես, թագուհի...: Հեքիաթներ շատ ենք սիրում:

Վարդ.— (նստած է, ծաղիկները խմբում են նրա շուրջը եւ լսում են): Մի հեռու երկրում լինում է Յօղիկ-թագուհին. նա շատ էր սիրում ծաղիկներ: Թագուհին ունէր մի հրաշալի այգի: Այդ այգում ծաղկում էին անթիւ գեղեցիկ ծաղիկներ, բայց ամենից հոտաւերը, ամենից գեղեցիկն էր շուշան ծաղիկը, բայց ոչ թէ սպիտակ, այլ գեղին շուշանը: Դա մի տննման ծաղիկ էր: Յօղիկ թագուհին շատ էր հալարտանում իր շուշան ծաղկով և պարծենում էր նրանով. բայց գրանից աւելի՝ շուշանով պարծենում էր այգեպանը: Հենց այդ թագաւորութեան մէջ ապրում էր մի չքաւոր սպարած-աղջիկ: Յօղիկ թագուհու այգու մօտից, ամեն օր նա սպակերին դեռն էր քշում լողացնելու: Աղջիկը կանգնում էր այգու ոսկէ ցանկապատի մօտ, հիանում էր ծաղիկների վրա և երկար ժամանակ չէր կարողանում

աչքը հեռացնել շուշանից, նա շատ էր սիրում
ծաղիկներ։ Մի անգամ նա համարձակւեց մտնել
այգին և ուզեց հոտ առնել շուշանից, էինց այդըո-
պէին տեսնում է նրան այգեպանը, յարձակուում
է աղջկայ վրա, բաշբառում և վճռդում այգուց։
Ծաղիկներ.—Խեղճա աղջիկ։

Վարդ.—Դրանից յետոյ աղջիկը էլ չէր հա-
մարձակում ծաղիկներով հիանալ։ Իսկ այդ ժա-
մանակ գեղեցիկ Շուշանը սկսեց թառամել,
թառամել ու մեռնել։ Այգեպանը ծեր ու ծոյլ
մարդ էր, և չէր ուզում հիւանդ ծաղկով զբաղ-
ւել։ «Դէն ձգեմ սրան։ Առանց սրան էլ շատ ծա-
ղիկներ ունենք...Ով գլուխ ունի թառամած
ծաղկով զբաղւելու»—ասաւ Յօդիկ թագուհին։ Այ-
դեպանը արմատախիլ արաւ շուշանին և նետեց
այգուց դուրս՝ դաշտը։ Այնտեղ շուշանին դտաւ
այն փոքրիկ աղջիկը։ Որդերը մաշել էին շուշա-
նի արմատը, բայց ծաղիկը գեռ կենդանի էր։
Սուշիկը հիւանդ ծաղիկը իր կրծքին սեղմեց, յե-
տոյ գետի ջրով լւաց, կտրեց չորացած տե-
րեները ու սիրեց նրան։ Եւ աղնիւ շուշանը
շատ չանցած այնպէս աճեց, լաւացաւ, որ ամ-
բողջ թագաւորութեան մէջ լուր տարածւեց նրա
գեղեցկութեան մասին։ Այդ լուրը լսեց և ծերու-
նի այգեպանը, վազեց աղջկայ մօտ, ծեծեց աղ-
ջրկան, խլեց նրանից շուշանը և նորից տնկեց
Յօդիկ-թագուհու այգում, որ արժանանայ թա-
գուհու շնորհին։ Իսկ խեղճա աղջիկը երկար ու
անմիտիթար լալիս էր...

Ծաղիկներ.—(Լուր արտասում են)։

ԱՄԵԼԻ.—Ախ, թագուհի Վարդ, ինչու

պատմեցիր այդպիսի մի տխուր հեքիաթ...Տես,
ծաղիկները լալիս են...

Մանուշակ.—(մեղմ) Հեքիաթի մէջ ինչքան
ճշմարտութիւն կայ...

Վարդ.—Ծաղիկներ, դէ՞ վոնդեցէք Մժեղ-
ներին։ Յոյսներդ դարձեալ իմ սիրոյ վրա դրե-
ցէք...

Մժեղներ.—(վախեցած) Ինչու էք վուն-
դում...Մենք ինքներս կերթանք...

Վարդ.—(զրկելով Մժեղներին) Սպասեցէք:
Եկէք ինձ մօտ, խեղճ Մժեղներ։ Մենք ձեզ վի-
րաւորեցինք, ծաղլեցինք, վոնդեցինք...Իսկ դուք
խղճացիք հիւանդ, ամենքից մոռացւած Վարդին
ու կեանքս փրկեցիք...Դուք լաւ սիրա ունէք։

Մկնականջ.—(կամաց) Ես հասկացայ հե-
քիաթի միտքը...

Ծաղիկներ.—Մենք էլ հասկացանք...Մժեղ-
ները մեղ լաւ դաս տւին...Սիրելի Մժեղներ, նե-
րեցէք։

Մժեղներ.—Ինչ էք ասում, ինչ կարիք
կայ այդպէս խօսելու։ Մենք ոչինչ չենք արել։
Մենք էլ ենք ցաւում (զգելով ծաղիկներին)։ Խընդ-
դրում ենք, մի լացէք։

Վարդ.—Բարեկամներս, ուրեմն ապրենք
այստեղ խաղաղ և միմեանց օգնենք...Թող մեր
այգին միշտ գան ապաստան գտնեն թէ չքաւոր-
ները և թէ հարուստները, այստեղ թող տիրի
սէր, կարեկցութիւն ու գգւանք։

Ծաղիկներ.—(շարժում են վրկները) Այս,
լինենք բարի... (իրար ձեռք ին սեղմում)։

Կակաչ.—(վախեցած) Այգեպանը գալիս է

իր թոռնիկի հետ (ծաղիկները վազում, իրանց տեղերն են կանգնում: Մժեղները գրկում են վարդին):

ՏԵՍԻԼ XII

**Նոյնք, Մարգարիտ և Այգեպան
Մարգարիտ.**—Ի՞նչ ուրախութիւն, պապի:
Վարդն առողջացել է: Այս ի՞նչ է: Նայիր, երկու
մժեղներ կպել են Վարդին...

Այգեպան.—Թող դրանց, թոռնիկս: Դրանք
ֆնասակար չեն: Դրանք ծաղիկների բարեկամ-
ներն են:

Մարգարիտ.—Ի՞նչ լաւ է այստեղ: Ի՞նչ
խաղաղ է: Ի՞նչ հրաշալի անուշահոտութիւն է:

Այգեպան.—Նայիր, Մարգարիտ...ահա ա-
րել ծագում՝ է...երկինքը ի՞նչպէս կարմրեց...
Ի՞նչ լաւ է այս օրհնեալ աշխարհը:

Ծաղիկներ.—(Խքմովին երգում են):
Փայլուն ճաճանչի սոխակը ճախրեց
շողշողուն թագով, ուրախ երգելով.
ուրախ ու զւարթ, նրան նախանձելով
իրեն ժպիտով շքեղ զարդարւած
գարունը եկաւ խուռն երամներով
ծաղկանց նաւակով, թունակներ եկան...
նաւը լծւած էր Ու նրան պատելով
թիթեռնիկներով: սկսան երգել
Թագուհու առաջ իրար գրկելով
դաշտի վրայով շարունակ պարել:

Երգեր ու պարեր

ԿԵՆԴԱՆԻ ՊԱՏԿԵՐ
Վ.Ա.ՐԱԳՈՅՔ



ՀՀ Ազգային գրադարան



NL0395227

«Հ Ա. Ա կ Ե Բ Ի» ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

1.	Հեղ. Մելիք-Հայկազեան, Քսան օք գետնի տակ	20	կ.
2.	Օսկար Ռւայլդ, Պրինցն ու ծիծեռնակը	20	»
3.	Ստ. Լիսիցեան. Բաջ ճամփորդներ	25	»
4.	Աթ. Խնկոյեան. Գիւղացին ու արջը	25	»
5.	Ստ. Լիսիցեան. Բաջ զինւորներ, պիհս	8	»
6.	Ռ. Պատկանեան. Զախու	20	»
7.	Ստ. Լիսիցեան. Սոված գայլը	10	»
8.	Կլաւդիա Լուկաշևիչ, Քեռի Մկօ	20	»
9.	Կարլ Էվալդ. Երկիրն ու գիսաստղը	12	»
10.	Կապուան. Ֆիօրէ փերին. Ասեղ	12	»
11.	Իւանովիչ. Աւօենց Ստեփանը	20	»
12.	Կ. Լուկաշեւիչ. Ծաղիկների մէջ	12	»

Գի՞նն է 12 ԿՈՊ.

Դիմել՝ գրավաճառներին կամ Թիֆլիս՝ Ռեակցիա
„АСКЕРЪ“